

ՏԱՍՆԵՐՈՐԿ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կես տարվանը 6 ռուբլ.:
Ուղարկման համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանությունները մեջ:

Օտարաբարությունը դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերից):

Ցայտարարությունը ընդունվում է ամեն լիզուով:

Ցայտարարությունների համար վճարում են
խրաքանչյուր թատին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Ինչպես են հայերը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նամակ Գորոցի. Նամակ խմբագրի. Ներքին լու-
րեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց խմբի-
րապետ.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.—ՑԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ երեսօրից:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀԱՅԵՐԸ

Երբ որ մենք յայտնեցինք այն միտքը
թէ պետք է հիմնել արտասահմանում մի
հայոց օրգան, հայերը սկսեցին սաստիկ
համակրել մեր մտքին: Երբ որ յայտնեցինք
թէ բաւական է մի 200 բաժանորդ Գիւ-
լորիէի օրգանը պահպանելու համար,—ա-
մեն կողմից սկսեցինք ստանալ համակրա-
կան նամակներ, որոնք մեր հայերը ցան-
կութիւն էին յայտնում գրվել Փարիզի մէջ
հրատարակվելու օրգանին:

Այն ժամանակ փողը դեռ չէր պահանջ-
վում և հայը շատ առատաձեռն է նիսիա
ազատութիւն անել:

Գիւլորիէի լրագիրը չափազանց, բայց
վիճանայի մի ֆրանսիական թերթ յանձն
առաւ հայոց օրգան լինելու: Այժմ էլ
նիսիա ազատութիւն չէ կարելի անել,
այժմ պէտք է փող վճարել.... Եւ ահա
այն ամեն անձինք որոնք իրանց պատրաստ
էին յայտնում Գիւլորիէի լրագրին գրվելու,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Օգոստոսի 10-ին

Բաւականին երկար միջոց է որ լրագրութիւ-
նը, գլխավորապէս «Մշակ», խօսում է արհեստ-
ական դպրոցների անհրաժեշտ լինելու մասին:
Իրաւ որ, այդպիսի դպրոցների գոյութիւնը մեր
ժողովրդի համար ոչ միայն ցանկալի է, այլ և
անհրաժեշտ հարկաւորութիւն է. բայց թէ ինչ-
պէս պէտք է իրագործել լրագրութեան այդ մա-
սին եղած առաջարկութիւնները, այդ մասին լը-
րագրութիւնը գրեթէ ոչինչ չէ ասում:

Արդեօք ժողովուրդը ցանկանում է ունենալ
արհեստական դպրոցներ. եթէ այո, ապա երբ և
որ տեղ, որ գիւղում, որ քաղաքում են եղած
հասարակական ժողովներ՝ այդպիսի դպրոցներ
բանալու, կառավարելու և ապահովելու մասին
մտածելու համար:

Եւ ոչ մի տեղ, կը պատասխանէ լին ընթեր-
ցողը: Բայց եթէ ժողովներ չեն եղած այդպիսի
օգտակար հիմնարկութիւնների մասին, ինչպիսի
արհեստագիտական դպրոցներ են, այդ դեռ ևս
ապագայ չէ որ ժողովուրդը հարկաւոր չէ համա-
րում ունենալ հաց առող արհեստագիտական դպ-
րոցներ: Մինչև անգամ եթէ ժողովուրդը չը հա-
կանար ևս արհեստագիտական դպրոցի նիւթա-
կան օգուտները, նորա կարելի էր այդ աւելի
չուտ և ճշտ հասկացնել. քան թէ մեր հասարակ
կրթութիւն և գրագիտութիւն տարածող դպրոց-
ների բերած մտաւոր և բարոյական, ուստի դժ-
ւար հասկանալի օգուտները: Բայց ո՞ր որ ուզում
է արհեստագիտական դպրոց բանալու, վրա խօ-
սել ժողովրդի հետ, առաջին դժուար խնդիրները
հենց նրան են կանգնացնում: Արդեօք արհեստա-

գիրը յետ քաջվեցան, որովհետեւ ժամա-
նակը հասաւ երբ պէտք է վճարել մի ութ
կամ չորս ռուբլ:

Այժմ սկսում են խօսել թէ ի՞նչի փա-
րկում չէ, ի՞նչի վիճակում են և այլն:
Ուրիշները ասում են թէ ի՞նչի չենք տես-
նում համարները:

Հայոց օրգանը հրատարակվում է ոչ թէ
նրա համար որ մենք ինքներս կարգանք
թէ ի՞նչ է գրված մեր մասին, բայց որ
Եւրօպան, Եւրօպական քաղաքական և գիւղ-
լամտական շրջանները կարգան թէ ի՞նչ
է գրված հայերի մասին և որ ուրիշ լրա-
գիրները արտատպեն հայոց հարցին նուիր-
ված օրգանից հայերի վերաբերեալ յօդուած-
ներ:

Ուրեմն ի՞նչ փոյթ որ մենք չը կարգանք.
բաւական է որ մենք գիտենք թէ մի լրա-
գիր կայ, որ իր իւրաքանչիւր համարում
նուիրում է մի երեք, չորս էջ հայոց խն-
դիրն, մի լրագիր, որ տարածված է նոյն
իսկ այնպիսի շրջանում, զիւսանալիական
շրջանում, որ պէտք է հետաքրքրվի հայոց
դատով:

Ի՞նչ է պատճառը որ «Journal d'Ori-
ent» անկանոն է գալիս Ռուսաստան, մենք
չը գիտենք: Մենք կարծում ենք որ այդ
երեւոյթը պէտք է վերաբերել փոստի ան-
կարգութեանը, քանի որ արգելել այդ լը-
րագիրը Ռուսաստանը չէր կարող, որովհե-

զիտական դպրոցի բացման իրաւունքը հմայ-
պէտք է ստացվի. հոգեւոր, թէ քաղաքական իշ-
խանութիւնից: Մեր կարծիքով, հոգեւոր իշխա-
նութիւնը չունի այդպիսի իրաւունքներ տալու
արտօնութիւնը. բայց եթեպէտեւ որ ունենալ
ևս, այն ժամանակ հ. իշ. իրաւունքով բացած
դպրոցում միմայն հայեր պիտի ընդունվեն,
որեւմէն դպրոցի պահպանութիւնն էլ պէտք է մի-
մայն հայերը հոգային: Արդեօք մեր գիւղե-
րից, գիւղաքաղաքներից կամ նոյն իսկ գաւա-
ռական և նահանգական քաղաքներից որ կարող
էր պահել այնպիսի դպրոց (իր առանձին նիւ-
թական միջոցներով, առանց ուրիշ գիւղերի և
քաղաքների օգնութեան), որի մէջ բացի հան-
րակրթական և աղքատի կեանքին վերաբերեալ
առարկաներից ու պետական լեզուից՝ նաև մի
քանի արհեստներ ուսուցանվէին, այնպէս որ
այնուհի աւարտողը մի օր և է գերազանցութիւն
ունենար մեր այժմեան վարպետներից: Կարծիք
չը կայ որ արհեստագիտութիւն քարոզողները
կամենում են որ մի և նոյն ժամանակ մեր ա-
պագայ արհեստները վարպետը գուրի չը լինի
գոնէ մի այնպիսի դարգացումից, որպիսին կա-
րող է մատակարարել մի հայկական դպրոց, որ
իր ծրագրով հասարակ լինել արեւմտական պրո-
գրիմնադրային, բաց հանելով սրա մէջ աւանդելի
հին լեզուները, որոց փոխարէն կը դառնի հայոց
լեզուն իր պարագաներով: Ով որ այդ չափով գոնէ
գիտութիւն չէ ձեռք բերել, նա չէ էլ կարող
լինք իրան կրթել ու դարգացնել տպած խօս-
քի օգնութիւնով: Նրա համար լրագրութիւնն
ու գրականութիւնը բոլորովին անօգուտ
պիտի աղանդէ, ուստի և նա մնալու է բոլորովին
անգրագէտ մարդիկ աստիճանի վրա անշարժ
կանգնած, հատարակ արհեստաւոր: Այսպիսիների
թիւը հիմա էլ մեծ է և դրանք գրեթէ ոչինչ նը-
շանակութիւն չունեն թէ աղքատի և թէ մարդ-
կային դարգացման յառաջդիմութեան հա-
մար:

Իսկ պրոգրիմնադիտական գիտութեան չափը
ձեռք բերելու համար աշակերտը գործ է դնում

աւ նա իր ուղղութեամբ սաստիկ համակրող
է Ռուսաստանին: Ինքն խմբագիրը գրում է
մեզ թէ անդադար ուղարկում է իր հա-
մարները Անդրկովկասի այլ և այլ քաղաք-
ները, բայց դարմանում է թէ ինչի թերթը
իր հասցեով չէ հասնում:

Մենք էլ ստացանք միայն մի քանի հա-
մարներ այդ լրագրից: Թերթը գեղեցիկ կեր-
պով տպված է, մաքուր և հաստ թղթի
վրա, խոշոր տառերով, եւ ամեն մի համա-
րում կայ մի մի յօդուած «Question Ar-
menienne» վերնագրով: Մենք աշխատում
ենք ծանօթացնել մեր ընթերցողներին այդ
յօդուածների հետ:

Եւ ահա, այժմ, երբ մի թերթ կայ, որ
պաշտպանում է հայոց դատը, Գիւլորիէի
լրագրին գրվել բաղժմիւր ցանկացողներից
գրվեցան միայն մի երեք չորս մարդ այդ
նոր լրագրին:

Մենք հրաւիրում ենք հայերին իրանց
նիւթական օժանդակութեամբ օգնել այդ
լրագրին, որ յանձն է առել պաշտպանել
թերթից հայերին ֆրանսիական լեզուով:
Ամօթ կը լինի մեզ համար եթէ չօգնենք
վիճանայի լրագրին. ի՞նչ կարծիք կունե-
նան Եւրօպացիները մեր մասին:

Խմբագիրն էլ հայերի յուսով արել է մեծ
ծախսեր իր լրագրի մէջ հայոց բաժին հիմ-
նելու. համար Հարկաւոր էր բերել տալ այլ
և այլ գրքեր ու լրագիրներ հայոց խնդիրը

միջին թիւով 6 տարի, օրական 7—8 ժամ պա-
րագրելով, թէ տանը և թէ դպրոցում. այն ինչ
տեղութիւնը ծախս է անում մի այդպիսի դպրոց
պահելու համար տարեկան 16—20,000 ռուբ-
լի: Եթէ մենք տալու լինէինք ապագայ վար-
պետին կէս պրոգրիմնադիտական գիտութիւն և
սրա հետ էլ արհեստ՝ այն ժամանակ ևս այդպի-
սի մի դպրոցի դասընթացը կը պահանջէր 6—7
տարվայ աշխատութեան միջոց և միջին թիւով,
տարեկան 10—12 հազար ռուբլի, մի գումար,
որը ոչ թէ մեր գիւղական, այլ և մեր գաւառա-
կան քաղաքներից և ոչ մէկը չունի այսօր:

Մեր գիւղական դպրոցները միջին թիւով ծախս
են անում տարեկան 3—500 ռուբլի. գիւղաքա-
ղաքներին՝ 1000—3000 ռուբլի, քաղաքներին
4—8000 ռուբլի. այլ է ներսիւսեան դպրոցի և էջ.
ճեմարանի ծախսը:

Երբ դպրոցների այդ եկամուտից մի մասը եկե-
ղեցիներն են տալիս, միւս մասը բաղկանում է
աշակերտների տուած ուսման վարձից և կամաւոր
նուէրներից: Գիւղական դպրոցները իրանց այդ
չնչին եկամուտներով երբեք չեն կարող ար-
հեստանոց ևս պահել. կարծում եմ այդ մասին
վիճելու տեղիք էլ չի լինի:

Մնում են մեր գաւառական քաղաքների հո-
գեւոր դպրոցները և թեմական դպրանոցները:
Դրանց մէջ արհեստ մտցնելու համար նախ և ա-
ռաջ պէտք է հոգեւոր իշխանութիւնը ստանայ
իրաւունք, որը չէ ինչպէս կառավարութիւնից
տուած պօթօժանիայի (կանոնագրի) մէջ. երկրորդ
այդ ապագայ հոգեւոր—արհեստագիտական դըպ-
րոցներին և դպրանոցներին՝ Բնակչի ծրագիր
պէտք է տաք որ դրանք կարողանան իրանց
նպատակին համաձայն պատրաստել նախ եկե-
ղեցական սպասարարներ. երկրորդ՝ մեր ծխական
դպրոցների համար ուսուցիչներ, երրորդ՝ արհես-
տարներ. չորրորդ՝ որ լինեն դրանք պահպանող,
դարգացնող և տարածող աղքատի գրականու-
թեան, որով ապահովի աղքի գոյութիւնը, ահա
խնդիրներ, որք դարձեալ լրագրութեան և գրա-
կանութեան մէջ տակաւին չեն լուծված և ամե-

ուսուցանարիւր համար, հարկաւոր էր
վարձել ամսական յայտնի ուսուցիչ մի թարգ-
ման հայոց լեզուից, հարկաւոր է վճարել
վիճանայի մէջ աշխատակիցներին հայոց
խնդրի վերաբերեալ կամք և թղթակցնե-
րին և. Պօլսում կամ ուրիշ տեղ:

Խմբագիրը մի նամակով դիմել է մեզ և
մի այլ նամակով ներսէս պատրիարքին, խն-
դրելով որ Ռուսաստանի և Թիւրքիայի
հայերը, եթէ կամենում են պահպանել
նրա օրգանի մէջ հայոց բաժինը, օգնեն
նրան նիւթապէս, որովհետեւ նա իր գրպա-
նից արել է արդէն մեծ ծախսեր այդ բա-
ժինը հիմնելու համար:

Ասացէք, խնդրեմ, ի՞նչ կարծիք կունե-
նայ նա այժմ մեր մասին, եթէ մենք խուչ
կը ֆնանք նրա առաջարկութեանը և չօգ-
նենք նրան:

Այդ պատճառով մենք կարծում ենք որ
կարելի է մինչև անգամ զանց առնել այն,
որ բաժանողը իր աչքերով չի տեսնի թեր-
թը, մանաւանդ որ հայերի մեծ մասը
ֆրանսերէն չը գիտեն էլ, բայց համոզ-
ված լինելով որ վիճանայում կայ մի հայոց
օրգան, օգնեն նրան նիւթապէս, թէ կուզ
ոչ թէ որպէս բաժանորդական վճար, այլ
որպէս նուիրատուութիւն:

Մի՞թէ հայը չէ կարող տալ այդ տեսակ
նշանաւոր գործ աջակցնելու համար մի
չորս, հինգ, ութ ռուբլ տարեկան:

Նախօրեւոր լուծելի խնդիրներն են, մեր գիտենա-
լով վասն զի մեր պահանջները տեղի չատ են,
քան թէ մեր ունեցած միջոցները:

Մենք ընդամենը վեց թիմական դպրանոց և
12—15 հատ հոգեւոր դպրոցներ ունենք Ռուսաս-
տանում. առաջինները պէտք է իրանց ծրագրով
համապատասխան լինեն արեւմտի սեմինարիանե-
րին, երկրորդները՝ հոգեւոր դպրոցներին: Այժմ
մեր թէ դպրանոցները և թէ դպրոցները իրանց
բուն նպատակին համեմատ համար, բաւարարիչ
նիւթական միջոցներ չունենալով, մնացել են
կիս ճանապարհի վրա. և մենք դեռ ևս պահան-
ջում ենք որ դրանց մէջ մի քանի տեսակ ար-
հեստներ էլ աւանդվեն:

Իւրաքանչիւր դպրոցում մի չորս կամ հինգ
տեսակ արհեստ մտցնելու համար հարկաւոր է
կամ դպրոցի այժմեան եկամուտը կրկնապատկել
և կամ թէ այժմեան ծրագրի կէսը միայն սոր-
վեցնել:

Եկամուտները կրկնապատկելու միջոց չունենք.
այդ պարզ է. բայց ծրագրիւր կարող ենք կիսել.
Ուրեմն հինգ տեսակ արհեստի մասին համարում
եմ եւս առ նուազն՝ 4000 ռուբլի վերին ստացի
որ մեր գաւառական հոգ. դպրոցների և թեմ.
դպրանոցների եկամուտը՝ 8000 ռուբլուց աւելի
չէ. ուստի՝ եթէ դրա կէսը գործ դնենք արհեստի
մասին, միւս կիսով հարկաւոր ենք մի գիտութիւն
տալ, որ հազիւ հասարակ պրոգրիմնադիտի
առաջին դասարանի տուած գիտութեանը:

Այդ նշանակում է հայոց դպրոցների և դըպ-
րանոցների մէջ պատրաստել մի սերունդ, որ եր-
բէք ընդունալ չի լինի մարդկային դարգացաւո-
րութեան հետ յառաջ երթալու, ինքնուրոյն
աշխատութեան և տպած խօսքի օգնութիւ-
նով:

Չէ որ պրոգրիմնադիտական ամբողջ դասըն-
թացն աւարտողներն էլ հազիւ կարող են տպած
խօսքից օգուտ քաղելով ինքնուրոյնաբար դար-
գանալ. չէ որ նոյն դպրոցի առաջին և չորրորդ
դասարաններն աւարտողների դարգացման մէջ
անագին զանազանութիւններ կան:

նոյն պարուն հոգաբարձուն հրաւիրել է ուսուցիչներ և վարժուհիներ դպրոցի համար առատ առձեռնութեամբ Բայց թղթակիցը զարմանում է որտեղից պիտի տայ այդ ուսուցիչները պ. Շամբորտանց, երբ որ յայտնի է թէ դպրոցը փող չունի: Թղթակիցը առաջարկում է որ ժողովուրդը հաշիւ պահանջի պ. Շամբորտանցից և հաւատացած է որ շուտով դպրոցը փակվելու է: Բայց երբի ժողովուրդը չի համարձակվի Շամբորտանցից հաշիւ պահանջել, որովհետեւ պարոնը ազա է և մի և նոյն ժամանակ ազա Ստեփանիկի ազգական է:

ԳՕՐՈՒՅ մեզ գրում են որ օգոստոսի 12-ին գիշերը 11½ ժամին Գորում երկրաշարժ եղաւ և այնպէս զորեղ էր, որ եթէ գտնէ չորս բալէ տեւեր, մեծ միասնեք կը տար քաղաքին, բայց բարեբաղդաբար՝ երկու բալէից աւելի չը տեսցր:

Օգոստոսի 11-ին, առաւօտեան 8 ժամին հորդեհ պատահեց Գորում: Այրվեցաւ այդուհի գաւառապետի փայտէ շինութիւնը, սարայ, որտեղ դարձած էին տախտակներ և դրած էր մի լաւ կառք: Գաւառապետը յայտնեց որ 3000 ռուբլ գումարի միաս կրեց: Չը նայելով որ հրդեհը ցերեկով պատահեց, ոչ մի կերպով չը կարողացան հանգսնել և երկու ժամվայ մէջ բոլորը մոխիր դարձաւ: Քաղաքի համար վերջապէս անհրաժեշտ է մի հրաշէջ մեքենայ: Վերջապէս երբ կը հոգայ այդ մասին Գորում քաղաքային վարչութիւնը: Թղթակիցը ասում է որ լաւ է որ այրված շինութիւնը առանձնացած էր միւս շինութիւններից, իսկ եթէ մօտիկ լինէր միւս շինութիւններին, կրակը կը լսիւր բոլոր մերձակայ տները:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

Վիեննայի „Journal d'Orient“ իր № 30 մէջ խօսելով հայոց ազգի ազգային վերածնութեան վրա ասում է: «Ռուսաստանը ոչինչ արգելք չէ գնում հայոց ազգին բարոյապէս և նիւթապէս զարգանալու, բայց մահմադարականութիւնը վաղուց է որ պատրաստել է ամեն տեսակ արգելքներ հայութեան գաղափարի զարգացմանը և յանձնել է այդ ազգը քիւրդերի և չէրկէսների կամայականութեամբ»:

Այդ միտքը մենք ուղիղ ենք գտնում: Բայց ուղիղ չենք գտնում նոյն լրագրի հետեւեալ միտքը: «Լեզուի և կրօնի միութիւնը աւելի քան թէ տեղաբնական միակերպութիւնը կը ստեղծել թիւրքաց հայերին այն ապագան, որ ստեղծել է ուրիշ ազգերի համար»:

Լեզուի միութիւնը, այո, այն կայն է, որ անշուշտ պէտք է կապէ մի ազգութիւն, որովհետեւ լեզուն այն ազգային յատկանիշն է որ պատկանում է մի ազգի բոլոր անդամներին, ինչ կրօնի և պատկանեն նրանք: Բայց չէ կարելի ստիպել մի ազգութիւն որ նրա բոլոր անդամները անպատճառ մի և նոյն կրօն դառնան: Ամեն ազգ, որ ունի իր մէջ բարոյական կեանք, որի մէջ չէ մեռել մտածելու, խորհելու, ձգտելու, զգալու ընդունակութիւն, որի մէջ միտքը անշարժ չէ, բայց առաջադէմ է շարժուն է, նրա մէջ միշտ ծնում են այլ և այլ աղանդներ, որոնք արտայայտութիւն են հոգեւոր վառ կեանքի, նրա մէջ մուտք են գործում այլ և այլ կրօններ: Ստիպել ազգի բոլոր անդամներին, որ նրանք ամենքը այն ձեւով աղօթեն, այն ձեւով բաւականութիւն տան իրանց հոգեւոր պահանջներին, ինչպէս ազգի մեծամասնութիւնը, անկարելի է:

Սրանից յետոյ Վիեննայի Փրանսիական լրագիրը հետեւալ համակրական խօսքեր է ասում թիւրքաց հայերի մասին: «Քաղաքակրթված եւրոպայի համար կայ մի պատ-

ւի խնդիր, այն է որ Բ. Դուռը վերջապէս կատարի իր խոստումը, որ յանձն է առել Բերլինի աւագածոցութեամբ այդ աւագածոցութիւնը: Դաշնագրի 61-որդ յօդուածի զօրութեամբ: Ժամանակ էր արդէն որ մեծ պետութիւններից մինը, այն է Անգլիան, յանձն առնէր և հանդուս կերպով յիշեցնէր Բ. Դուռը իր պարտաւորութիւնը որ սա, կարծես, մոռացել էր: Ոչինչ չը կատարվեցաւ երեք տարվայ ընթացքում թիւրքաց հայերի դրութիւնը բարեփոխու, կրօնի և ուսման ազատութիւնը նրանց ապահովացնելու համար և հայերին պաշտպանելու կամայականութեան և ճնշման դէմ, շնորհելով նրանց վարչական և քաղաքային ինքնավարութիւն»:

Այնուհետեւ լրագիրը շարունակում է այսպէս:

«Մինչև այժմ եւրոպայի ցանկութիւնները հայերի վերաբերութեամբ չը կարողացան իրագործվել, բայց այժմ եւրոպան այլ և չը պէտք է յապաղէ միանալու Անգլիայի հետ, ընդհանուր ոյժերով հաստատամտութեամբ պահանջելու համար որ հայոց ազգութիւնը կարողանայ ապրել և զարգանալ կանոնաւոր կերպով, առանց արգելքի, աւելի բարեօրէն օրէնսդրութեան և եւրոպայի դրական հովանաւորութեան տակ»:

«Հայաստանը պէտք է վերանորոգվի և վերակազմվի ուսման, խօսքի միջոցով: Եւրոպան պէտք է նպաստի այդ վերածնութեանը»:

«Journal d'Orient» իրաւամբ սպասում է այդ գործի կատարելը, այսինքն թիւրքաց հայերին իրանց ինքնավարութեան ապահովելը Ռուսաստանի և Անգլիայի միացած ոյժերից: Մանաւանդ Ռուսաստանը շահ ունի, ասում է Փրանսիական թերթը, միջամտել թիւրքաց հայերի գառի մէջ, որովհետեւ այդ պետութիւնը ինքն իր հպատակների թիւում հաշուում է հայոց ազգութեանը պատկանող բազմաթիւ հաւատարմ հպատակներ:

ԻՏԱԼԻԱ

Ժողովուրդների կեանքի մէջ ոչ մի սխալ չէ անցնում առանց տխուր հետեւանքների, ինի այդ սխալը ներքին թէ արտաքին քաղաքականութեան մէջ: Գեռ նորերում մի քանի ամիս սրանից առաջ՝ Իտալիայի և Ֆրանսիայի փոխադարձ յարաբերութիւնները ամենալաւ էին թուում: Այդպէս էին նախում միմեանց վրա այդ երկու երկրների կառավարութիւնները և ժողովուրդները: Կային այդ երկրների մէջ էլ այնպիսի քաղաքագէտներ, որոնք չէին հաւանում այդ երկու արեւմտեան ժողովուրդների բարեկամութիւնը, բայց նրանք ստիպված էին հաշտվել այդ մտքի հետ և հպատակվել իրողութեանը:

Ֆրանսիացիների գործած արշաւանքը Տուրինի վրա խանգարեց այդ երկու դրացիների բարեկամական յարաբերութիւնները: Որքան էլ աշխատում է Ֆրանսիական կառավարութիւնը փոքրացնել Տուրինի վրա գործած արշաւանքի նշանակութիւնը, որքան էլ աշխատում են թէ իտալական և թէ Ֆրանսիական քաղաքական մարդիկ վերականգնել այդ երկու դրացի ժողովուրդների բարեկամական յարաբերութիւնները և գնահատել տալ նախկին յարաբերութիւնները, այնու ամենայնիւ այդ յարաբերութիւնները չեն վերականգնվում: Գտնեալ վնասված կողմը, Իտալիան, սատակի ուն ունի դէպի Ֆրանսիան և իտալացիք անդադար կրկնում են, որ պէտք է զգուշանալ Ֆրանսիայի նուաճողական ձգտումներից:

Իտալական լրագիրների էջերը լիքն են այնպիսի յօդուածներով, որոնք ապացուցանում են, թէ Ֆրանսիայի քաղաքականութիւնը Իտալիայի վերաբերութեամբ թշնամական ուղղութիւն ունի և որ անհրաժեշտ է միացեալ Իտալիայի արժանաւորութիւնը և ամբողջութիւնը պահպանելու համար այլ պետութիւնների հետ դաշնակցութիւն կազմել: Իտալիայի քաղաքական մարդիկ մէկը միւսի ետեւից կարծիք են յայտնում ամենաքիչ հետաքրքրող այդ առարկայի մասին և թոյլ չեն տալիս, որ հասարակական կարծիքը մոռանայ այդ հարցը:

Վերջին ժամանակներում այդ կողմից իր վրա առանձին ուշադրութիւն դարձրեց «Opinione» լրագրի մէջ տպված իտալական սենսոր Կազօրնայի նամակը:

Այդ նամակը մեծ տպաւորութիւն է գործել իտալական հասարակական կարծիքի վրա:

Կազօրնի իր նամակի մէջ անց է կացնում զխաւորապէս այն միտքը, թէ որքան էլ ցանկալի է Իտալիայի համար բարեկամ լինել Ֆրանսիայի հետ, այդ բարեկամութիւնը անկարելի է: Նամակի հեղինակը մոռանալ չի կարող մի շարք պատմական փաստերի վրա, որոնք ապացուցանում են, որ Ֆրանսիան միշտ թշնամի է եղել իտալական միութեան և Իտալիայի հզօրութեան և թէ նա երբեք չէ թոյլ տուել Իտալիային իր հետ հաւասար լինել: Այդպէս է եղել բուրբոնների և օրլեանների թագաւորութեան ժամանակ, այդպէս է եղել 1848 թուականի հանրապետութեան ժամանակ, որ խից իտալացիներից Հռոմը դրեթէ քսան տարի ժամանակով, երբ Ֆրանսիան պատերազմում էր Պիեմոնտի հետ և զրգուում էր Իտալիայի թշնամութիւնը դէպի այդ երկիրը: Եթէ վերջը Նապոլէոն III նպաստեց Իտալիայի միութեանը, այնու ամենայնիւ այդ օգնութիւնն էլ չհասարակական նպատակներ ունէր. այդ օգնութեան համար Իտալիան վճարեց 60 միլիոն Ֆրանկ և զրկվեցաւ երեք նահանգներից: Ֆրանսիական եւրոպայի հանրապետութիւնը, միացնելով իր հետ Տուրինը և կատարելապէս շրջապատելով Իտալիային հետեւում է Ֆրանսիական աւանդական քաղաքականութեանը Իտալիայի վերաբերութեամբ: Կազօրնա, հաշուելով Ֆրանսիայի թշնամութեան գործողութիւնները իր հայրենիքի դէմ, չէ մոռացել յիշել և իտալական վերջին փոխաւորութիւնը, որի աջողութեանը Ֆրանսիական բանակիները և Ֆրանսիական մամուլը բոլոր միջոցներով աշխատում էին խանգարել: Նամակի հեղինակը ասում է, որ նա միշտ կողմակից է եղել Ֆրանսիայի և Իտալիայի բարեկամութեան, բայց Ֆրանսիան անկողող է Իտալիայի արտակից բարեկամը լինել, որովհետեւ դա հակառակ կը լինէր Ֆրանսիական քաղաքականութեան աւանդութիւններին: Մի և նոյն ժամանակ նա այն եզրակացութեան է հասնում, որ Իտալիան ամենանշանաւոր շահերով կապված է Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի հետ:

Բայց Իտալիայի դաշնակցութիւնը Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի հետ լրագիրները անկարելի են համարում, իսկ Ֆրանսիական մամուլը այդ մտքին հեգնօրէն է վերաբերվում: Բայց այդ հեգնութիւնը կից է և Ֆրանսիացի խելացի մարդիկ շատ լաւ հասկանում են, թէ Ֆրանսիական հանրապետութիւնը ինչ մեծ սխալ գործեց, թշնամանալով Իտալիայի հետ:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Բաւարիայի թագաւորը շատ օտարոտի բնաւորութիւն ունի: Նորերում նա կուեց իր քարտուղարի հետ որ շատ հասակով մարդ է և որին նա ստիպում էր ամեն օր երեք ժամ շարունակ իր առջև կանգնել և գիրք կամ լրագիրներ կարդալ: Քարտուղարը յայտնեց որ այսուհետեւ այլ ևս չէ կարող ժամերով ոտի վրա կանգնել, չէ կարող այդքան ժամանակ բարձր ձայնով կարդալ և պահանջում է որ գիշերը թագաւորը թողնի նրան հանգիստ քնելու, առանց նրան դարձեցնել տալու գործերի համար: Թագաւորը չը համաձայնվեց իր քարտուղարի պայմաններին և սա երկար տարիներ լուրջօրիկ II-ին ծառայելուց յետոյ, վերջնական հրաժարական առաւ իր տիրոջը:

Նորերում Լոնդոնում կայացած բժշկների կոնգրէսի մէջ խնայեցաւ որ երկրաշարժի վրա կան 180,000 բժշկներ: Յայտնվեցաւ նոյնպէս որ եւրոպայի բնակիչներից կան 3108 հոգի, որոնք հասած են հարիւր տարեկան հասակին: Սրանց թիւն 1864 կանայք են և 1244 մարդիկ: Ֆրանսիական «Rappel» լրագիրը հաւատացնում է որ հարիւր տարեկան հասակի մարդկանցից շատ քիչերը դիմում են իրանց կեանքի ընթացքում բժշկների օգնութեանը:

Ֆրանսիական երկաթուղիների վրա ծառայում են ընդամենը 182,983 պաշտօնականներ, որոնց թիւում 13,554 կանայք են, իսկ մնացածները տղամարդիկ:

«Morning Post» լրագիրը հաղորդում է որ Չինաստանը պատուիրել է Գերմանիայում 15 միլիոն մարկ գումարի պատերազմական այլ և այլ մթերքներ և զէնքեր:

Բաւարիայի թագաւորի վրա պատմում են որ նա սատակ ատում է քաղաքական գործերով զբաղվել: Նա իր մայրաքաղաքում, Միւնխըր-ում, շատ հազիւ է լինում, բայց մեծ մասամբ իր ժամանակը անցնում է իր բազմաթիւ ամբողջներում, և երբեք իմաց չէ տալիս իր միջոտներին թէ ինքն որտեղ է գտնվում: Երբ մի նիստերը պէտք է թագաւորին մի ղեկուցում անեն, որը վաւերացնում համար Լուդովիկ II-ի ստորագրութիւնը անհրաժեշտ է, նրանք պէտք որոնեն թագաւորին ամբողջ Բաւարիայում: Բայց հէնց որ թագաւորը իմանում է թէ մի նիստերը նրա ետեւից են ընկած, նա սկսում է արագութեամբ մի ամբողջ միւս ամբողջ տեղափոխվել:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 օգոստոսի: «Прав. Вѣстн.» հաղորդում է որ Բարձրագոյն հրովարտակով զեներալ-լեյտենանտ խրէշչատիցին շնորհված է օգոստոսի 17-ին Ալեքսանդր Նէվսկու շքանշանը, արժանանալով զարդարված: Եկող տարուց դիտաւորութիւն կայ ձեռնարկել Ս. Պետերբուրգում մի մանաւոր լրագրի հրատարակութեանը «Военная Газета» վերնագրով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 օգոստոսի: Պետական բանկի 5% տոմսակր առաջին շրջանի արժէ 96 ռ. 50 Կ., երկրորդ 94 ռ. 25 Կ., երրորդ 94 ռ. 75½ Կ., չորրորդ 94 ռ. 12½ Կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակր արժէ 229 ռ. 50 Կ., արեւելեան առաջին 91 ռ. 12 Կ., երկրորդ 91 ռ. 12 Կ., երրորդ 91 ռ. 12 Կ., ոսկի 7 ռ. 70 Կ.: Ռուսաց 100 ռ. շաբաթը վրա արժէ 220 մարկ, ֆարդի վրա արժէ 272 Ֆրանկ 12 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ՂՈՒԲԱ. Ն. Բ. Ստացանք 30 ռուբլ, որոնցից 20 գիտենք թէ ում համար է, իսկ 10 Միւրզա Յովակիմեանցի համար էք ասում, բայց այդ անունով Ղուբայում բաժանորդ չունենք: Ասացէք, որտեղ է նա բաժանորդ:

Խմբագիր—հրատարակող ԳԲԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Գ Ա Մ Ա Ռ - Գ Ա Թ Ի Պ Ա Յ Ի

Բոլոր բանաստեղծութիւնները ժողովա-
ծուն, տպած Մասկայումամենաւոր թղթ-
թի վերայ, հեղինակի վիճակը պատկերով
զինը 50 Կ. վաճառվում է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱՎԱՅԱՌԱՆՈՑՈՒՄ:

Նոյն տեղը վաճառվում են հետեւեալ նոր
հրատարակութիւնները:

- 1) Ռոբինզոն-Կրուզո՝ Աշտնեան " 60 Կ.
- 2) Ահմէդի տոպրակը՝ Լալայեան " 10 "
- 3) Ծագիւմ արքայի արձ. և չափ.
բանից՝ Կոստանեան " 25 "
- 4) Ուսուցիչ հայոց լեզուի՝
Նազարեան " — — " 40 "

Վերջին երկու գրքերը քերից զու-
մարով գնողները նշանաւոր զիջումն են
ստանում:

144 Արծրունու գալէրէա 144
ամենալժան պահեստ
մերկի և հայելիների:

ՄԹԵԱԿՆԵՐ կոտորելու փոշի:
Ծախվում է **ԾԱՏՈՒՐՈՎԻ** լամ-
պի մագաղիւնով:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ
անունով ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒՄՅ
գրքագիրքը լոյս տեսաւ և ծախվում է
Կովկասեան ու Կենտրոնական զրաւաճա-
ւանոցներում:

Գինն է 40 Կ. օպէկ:

Իսկ ով ցանկանում է հատը 35 կոպէ-
կով ձեռք բերել, զինը **ԿԱՆԻԻԿ** վճա-
րելով և ճանապարհ հաճախսը իր վրա
առնելով:

Թող զիմք մեզ հետեւեալ հասցեով.
"Յ Թիֆլիս. — Նա Աւաբարթ. Ի-
նան Երովիչու Նազարյանց.":

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ
ԳԱՆ ԹԵ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մաւրա-
նէր, կոնֆէկաններ, **ԿԱԿԱՕ**, բրինձ, Ա-
ՄԱՆԿԱՆ, բոկալներ, թասեր, երես լուա-
նալու ամաններ, չայիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ,
կերակրի ամաններ (սյճեք), մատուցարան-
ներ, ԿՈՂՊԵՐՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, զրաւներ,
ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակ-
ներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԵՂՈՂԱԿՆԵՐ, ալբոմ
ներ, ՄԱՀԱՎԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՑ, արիօ, պա-
րուսին, թաշկինակներ, երեսբիշներ, կիտե-
կա, զուլբաններ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԵՅՆ, խե-
րեա, կոնեակ և այլն: Թէ՛ մեծ քանակու-
թեամբ ՎԱՅԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԿՐ
44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54
ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:

Մի և նոյն տեղը էժան գնով. ԵԵՐԲԵՏ մա-
գնեղիա, խմոր ԾԱՐԱԻՐ ԴԷՄ, ԽԻՆԱՑԻ ԳԻ-
նի ջերմի դէմ, կարթուրան ԳՕՇԻ, հեղուկ
և ՍԱՊՈՆ, բժշկական թուղթ փառերկրով-
տի համար, պարսկական փոշի:

53—100

Հրատարակութեամբ Ներսիսի Ախմէտե-
անց լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Ներսիսի
"Տնային բժշկական մարմնամարզութեան"
գրքից հայերէն թարգմանութեւնը 45
պատկերով, որոց միջոցաւ կարելի է
կատարել առողջապահական բազմաթիւ
մարմնամարզական կրթութիւններ ամեն
տեղ, ամեն ժամանակ և առանց դրժիքի:
Նա յարմարացած է ամեն հասակի արանց
և կանանց համար: Գինն է 40 Կ. օպ. ծախ-
վում է "Կենտրոնական և Կովկասեան զրա-
ւաճաւանոցներում": Նոյնպէս և պ. Մ. Վար-
դանեանցի մօտ. "Тройцкій пер. типо-
графия Вартанянца, въ Тифлисе.":

ԱՐԳԷՆ ԺԱՐՎՈՒՄ Է
"ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ"
Անունով մեր **ՉՐՐՐՈՐԴ** տարուայ
գրքագիրքը Կենտրոնական և Կովկասեան
զրաւաճաւանոցներում:

Գինն է 60 Կ. օպէկ
Գումարով առնողներին զիջումն կը լինի:
Իսկ ով ցանկանում է հատը 55 Կ. օպէ-
կով ձեռք բերել, զինը **ԿԱՆԻԻԿ** վճա-
րելով թող զիմք մեզ հետեւեալ հասցեով.
Յ Թիֆլիս. — Նա Աւաբարթ. Ի-
նան Երովիչու Նազարյանց.":

Յ. Նազարեանց
5—25

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.
Ն Ո Ր Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Տեղափոխվեցաւ Գ. ան օվսկայա փո-
ղոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝
ՏՐՈՑԻԹ փողոցը № 11. փօստատան
ետեւի բուշան: Ընդունվում են ամեն լի-
զուով և ամեն տեսակ պատուէրներ ամե-
նամատչելի գներով:

Նոյն ապարանում ընդունվում են և պա-
տուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ
ապագրութեան համար փայտի և պղնձի
վրա:

"Խ Ե Ն Թ Ը"

ԱՐԿԱՅՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ՌՈՒՐԲԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱՅՄՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՅՑԻԻ

Տպած մաքուր թղթի վրա, գիրքը բազ-
կանում 400 կրկնից: Թիֆլիսում ծախվում է
"Մշակի" խմբագրատանը, "Կենտրոնական
զրաւաճաւանոցում", "Կովկասեան զրա-
ւաճաւանոցում" պ. Զաքարիա Գրիգորեան-
ցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բոլոր
ճեանցի, Հովսէփեանցի ծխախոտի մագաղի-
ններում:

Գինն է 1 րուբլ 20 Կ. օպ.:

1880 թուից թիֆլիսում բացվել են պանսիօն և կրկնա-
կան դասատուներ, քաղաքային և զինուորական գիմնազիանե-
րի և բէալական ուսումնարանի աշակերտների համար, և ուսու-
մնարան երեխաներին պատրաստելու միջնակարգ դպրոցների
համար: Գաղական, Գերմանական լեզուների և երաժշտու-
թեան փարժութիւնը աւանդվում է զործնականապէս:
Երեխաներին ընդունում են ամբողջ տարի, ամենայն օր
8-ից մինչև 2 ժամն:
Միջայէլեան կամուրջ, Կիկոյայեվսկի փողոցի անկիւնում,
իշխանուհի Գրուզինսկու տանը № 21, որտեղ բովանդակվում
է երրորդ բաժնի Հաշտարար գատարանը:
1—3
Բ. ԲԵՅՈՒԴ:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՉ
ԵՒ
ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ
Ընդունելութիւնները սկսվում են օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սկսանքների
1-ից: "Մանկական պարտէզի" մէջ ընդունվում են մինչև 7 տարեկան երեխաներ, իսկ
«Տարրական ուսումնարանում» մինչև 13 տարեկանները:
Իշխան Ն. Ամատունու տուն, Վելիամինովսկի փողոցի վերայ:
Բ. Միրիանեանց

Մամուլի տան է, և շուտով լոյս կը տեսնի Ս. Մանդինեանի հետեւեալ
աշխատութիւնը. **"ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ**
ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ" ծխական դպրոցների 4-դ տարիայ դասընթացը,
և միանգամայն 1-ին, 2-դ և 3 տարիների համար հրահանգ:
Տիֆլիս, Михаилу
Н. Теръ-Никогосову.

ՎԻԵՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազմաթոռներ) ծախվում են մեծ
քանակութեամբ և մանր, միջի փողոցում Կատարիկաց փողոցի անկիւնում ՄԻ-
ԿԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:
Օտարաբաղաքացի կարող են զիմել այս հասցեով. Թիֆլիս, Михаилу
Н. Теръ-Никогосову.
59—150

ПРИСЯЖНЫЙ ПОВЕРЕННЫЙ
А. С. ФРЕНКЕЛЬ
Переѣхалъ на Соловаскую ули-
цу, въ домъ К. Меликова.

ԵՐԳՎԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ
ՍԵՐԳԵՅ ՎԱՍԻԼԵՎԻՉ ԶԵՄԵ-
ՍՕՎ տեղափոխեց իր բնակարանը Արա-
նախայա փողոց "Կրուժոյի" շինութեան
ետեւը, Գարբուսովի տանը: 5—5 (1)

ԹԵՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱ-
ՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գտնել ԱՆ-
ԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ թէյ
լու տեսակի ֆունտը 1 ր. 20 Կ. և 2 ր.
և համեմատեան առաջինը 1 ր. 60 Կ. հետ
և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՅ-**
ԼԻՍՈՒՄ, որպէս զի իմանան Անգլիա-
կան խանութի մէջ ծախվող ամեն տեսակ
թէյի համեմատական **ԳԵՐԱՉԱՆ-**
ՑՈՒԹԻՒՆԸ: Բացի այդ Անգլիական
խանութը կը աւանդէ **ՄԱԳՈՒՐ ԹԵՅ**
առանց **ԹՂԹԻ** և **ԱՐՃՃԻ:**
38—100

ՀԱՒԱՏԱՐՈՒ Ս. ՄԱՐԻԱ-
ՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՅ ԿՊՐՈՑԻ
վարչութիւնը պատիւ ունի յայտնել
յարգել հասարակութեանը, որ օ-
գոստոսի 20-ից դպրոցը **ԸՆԴՈՒ-**
ՆՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՈՒՄ
ՆԵՐ ամեն օր, առաւօտեան ժամի
8—12-ը: Հասցէն՝ Լազարեանի փո-
ղոց, տուն պ. Մելիք-Շահնազարեանցի:
2—5

ՎԵՐԱԿՈՒՆԵՐ 4 ր., ծրծղներ 1 ր.,
ճալիղ աթոռներ 1 ր. 50 Կ., ՓԱՅՏ-ԱՌՈՒ
4 ր., ԲԱԶԱՍՈՒՐ-ՄԱՀԱԿԱԼ 10 րուբլ և
աւելի, թէյի բաժաններ 25 և 30 Կ., մի
աման ջրոցներ 50 Կ., պատեղա ծխողների
համար 60 Կ. ֆունտը, անգլիական ՎԱՆՆԱ-
ՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱ-**
ԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:
10,000 զոյգ զուլբաներ 25 Կ.—ից զոյղը,
10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 Կ.—
1 ր., 7,000 մատուցարաններ 5 Կ.—5 ր.,
1,000 ՄԱՀԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400
արշին բաժանէյ 1 ր.—1 ր. 30 Կ., պա-
րուսինա 40 Կ.—1 ր., 300 հատ բէգովեր
4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍԱԿԵՆՈՎ, 10,000
ֆունտ թէյ ԹԵՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 Կ.: եր
կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի հա-
մար: Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ**
ԽԱՆՈՒԹԻ մէջ:
35—100